



ՊԱՇՏՈՆ՝	Գրաֆիկ դիզայներ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ՝	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ՝	Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ՝	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ՝	Հունվարի 09, 2018թ.
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ՝	Հունվարի 31, 2018թ.
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ՝	Երկարաժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անելիք Բանկը փնտրում է ստեղծարար մասնագետի լրիվ դրույքով գրաֆիկական դիզայների թափուր հաստիքը համալրելու նպատակով: Մենք փնտրում ենք վճռական և մոտիվացված դիզայների վերջնական պրոդուկտի վերաբերյալ հստակ պատկերացմամբ: Նախապատվությունը կտրվի այն թեկնածուներին, ովքեր ունեն պրոֆեսիոնալ պորտֆոլիո:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Դիզայնի էլեմենտների ստեղծման համար թվային իլյուստրացիաների, ֆոտո խմբագրման ծրագրերի օգտագործում,
- Վիզուալ տարրերի պատրաստում, ինչպիսիք են լոգոները, օրիգինալ նկարները, նկարազարդումները, պաստառները և թռուցիկները, ինչպես նաև այլ նյութեր, որոնք հաճախորդներին կփոխանցեն պրոդուկտի ամբողջական գաղափարը,
- Մակետների դիզայն՝ գույների, պատկերների և տառատեսակների ընտրությամբ,
- Ղեկավարության կողմից առաջարկվող հնարավոր փոփոխությունների ներառում վերջնական նյութերի մեջ,
- Դիզայն-կոնցեպտի տարրերի վերանայում տպագրումից կամ հրապարակումից առաջ՝ վրիպակները բացառելու նպատակով:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿՎԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ համապատասխան ոլորտում
- Adobe Photoshop և Corel Draw ծրագրերի գերազանց իմացություն (3Ds Max և Adobe Illustrator ծրագրերի իմացությունը կդիտվի որպես առավելություն),

- Գեղարվեստական և ստեղծարար մոտեցում,
- Բանավոր և գրավոր հաղորդակցման գերազանց հմտություններ,
- Անկախ աշխատելու և վերջնաժամկետներին հետևելու ունակություն,
- Ճկուն դիզայնի հիմունքներին տիրապետում;
- Ուժեղ աչքի ընկնող պորտֆոլիո՝ դիզայնի նկատմամբ խելացի մոտեցման դրսևորմամբ,
- Աշխատանքային փորձը ֆինանսական կամ հարակից ոլորտներում կոնկրետ որպես առավելություն:

ԴԻՄԵՆՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու Անելիք Բանկի թիմին, խնդրում ենք լրացնել հայտարարությանը կից ներկայացված դիմում-հայտը և այն ուղարկել hr@anelik.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Անելիք Բանկ» ՓԲԸ հիմնադրվել է 1990թ. թեթև արդյունաբերության բնագավառի ձեռնարկությունների կողմից՝ որպես փայատիրական կոմերցիոն բանկ: 1996թ. «Անելիք» փայատիրական առևտրային բանկը գրանցվել է (ՀՀ ԿԲ արտոնագիր No 9) և սկսել է գործել որպես «Անելիք Բանկ» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն: «Անելիք Բանկ» ՓԲԸ ունիվերսալ առևտրային բանկ է, որն ակտիվ մասնակցություն ու ներդրում ունի երկրի սոցիալ – տնտեսական մակարդակի բարելավման բնագավառում: 2007թ. «Անելիք Բանկ» ՍՊԸ վերակազմավորվել է փակ բաժնետիրական ընկերության: